

Ահաւաստիկ հարցեր որ իրարու կը բաղ-
խին ու կ'ընկապէին:

Պարագան՝ որ ծաղկածութեան շրջանին
յանկարծ կ'ընայ յաջորդել անկումն ու ա-
մայութիւն, կը թուի ծանրութիւն մը տալ
անհատի արժանիքին, բայց քանի որ ան-
հատի մը հետ գրեթէ միշտ ամբողջ սե-
րունդ մըն ալ կ'անցնի կը ցուցնէ թէ ան-
հատը անբաժան չ'էր համայնքէ մը որ ի-
րեն կը հետեւի:

Հին ու Նոր պատմութեան մէջ թէ մէկ
և թէ միւս առածին ի նպաստ՝ բազմա-
թիւ փաստեր կան: Բայց հին պատմու-
թեան մէջ աւելի բազմաթիւ են ի նպաստ
անհատին խօսող փաստերը քան համայն-
քին: Նորին մէջ ընդհակառակն բացար-
ձակապէս զերակշիռ են ի նպաստ հա-
մայնքին խօսող փաստերը: Թերեւս հին
պատմութիւնն ալ ի նպաստ համայնքին
կը խօսի և միայն մեզի հասած վաւերա-
թուղթերու պակասութիւնն է որ երեսոյթ-
ները տարբեր կը ցուցնէ:

Այս յայտնի է թէ կորդ կամ լարուած
ու լեցուած դրութեան ժամանակներուն է
որ ժողովուրդներու մէջ կը պոռթկայ ա-
նակնկալ զարգացում մը ու խոյանք մը
դիւցազնական կամ շինարար գործերու,
բայց միանգամայն շուտ ալ կ'անցնի ինչ-
պէս անապատի գարուն մը: Աւելի բնա-
կանօն ժամանակներու և պայմաններու
մէջ հոլովոյթները անզգալի կ'ըլլան, ա-
լիքներու յարոյցքի մը պէս, աւելի ընդ-
հանուր, սակայն, ու տեսական:

Ժամանակ կար թերեւս ուր ամէն ինչ
անհատէ կախուած էր, ինչպէս ժամանակ
պիտի գայ ուր անհատը ամէն ինչ հա-
մայնքին պիտի պարտի:

Ստոյգ է սակայն թէ ամէն անհատ որ-
քան ալ անըդունակ՝ համայնքին մէջ իր
իրաւունքն ու տեղն ունի և ոչընչութեանը
մէջ թերեւս իր պահատի տեղը՝ ընկերու-
թեան մէջ հաւասարակշռութիւնը պահե-
լու համար անոր գլխագարուցեանց վայր-
կենին: Նոյնքան ստոյգ է միանգամայն
թէ իւրաքանչիւր անհատ՝ որքան ալ ան-
ընդունակ, միշտ պատրաստուած է հա-

մայնքին մէջ կլլելու այնքան որքան կըր-
նայ:

Եւ յաւիտենական ու կատաղի կոխ մըն
է ընդ մէջ համայնքին ու անհատին:

Բոլոր այն ինչովը՝ զոր անհատը կըր-
նայ իւրացնել համայնքէն՝ կը ցուցնէ աւ-
տիճանը զոր ինք ունեցեր է համայնքին
կազմակերպութեան մէջ. ինչպէս բոլոր
այն ինչովը զոր համայնքը կը պարտա-
դրէ իր պոռտագոնիստ անհատին՝ կը ցուց-
նէ աւելի մեծ չափը, քանակը՝ զորս ինք
ունեցեր է անհատին պատրաստութեան
մէջ: Մեր շատ արդի ժամանակներուն մէջ
կը թուի թէ ոյժը համայնքին մէջն է որ
իր նիստն ունի:

Այսուհանդերձ հին իմաստութիւնը միշտ
իր զօրութեանը մէջ կ'երեւի. Սահման քա-
լաց, զէն իշխանց. որքան հաստունէ, այնքան
տիրէ:

== L I O ==

Ե

Մեծ հատորով պիտի գրենք. — Մէլիքի աղ-
էկէր՝ վէպ. — Իդէալ մարդը՝ Գայիանէ:

Լէօի հրաշագործութիւնը զարմանալի կը
դառնայ 1902-1905 տարիներուն: Ժա-
մանակի այս կարճ միջոցին կը հրատա-
րակէ Յովսէփ Կարոյիկոս Արդարեան, Ստե-
փանոս Նազարեանց՝ երկու հատոր Հայ
ուսպգորտարեան պատմութիւն՝ երկու հատոր,
Գրիգոր Արծրաւի՝ երեք հատոր, Ռաւսս-
հայոց Գրականութիւնը, Ս. Միսրոբ, Եւ այս
բոլորէն քանի մը մը տարի յառաջ կը
հրատարակէր ուրիշ ստուար հատոր մը՝
Մեյիթի աղչիկը՝ իր մեծ վէպը: Եւ դեռ
աւելի մեծ գործեր ունի՝ ձեռագիր, զեռ
չտպուած, որուն միայն տպագրուելու յայ-
տարարութիւնները կարդացինք մենք:

Ի՛նչ ընդմատուրութիւն: Ահա թէ ինչ
զաղափար ամենէն յառաջ կը ծագի մար-
դուս մտքին մէջ:

Այս բեղմնաւորութիւնը ծնունդ է քէ վիժում. հոգի և արիւն ունեցող արարած, նե՛ր են, թէ մտքի կզկզանքներ:

Արուեստի և իմացականութեան աստիճանն է որ պիտի որոշէ այս գրուածներուն յարգը, արժէքը:

Ստեղծել կեանք, կեանք, զանգուածաւոր, կորովի և անթիւ. ահա ինչ որ կը պահանջէր և որուն կը ձկտէր Զուլա:

Ինչ կեանք կայ Լէօի այս բազմաթիւ հատորներուն մէջ:

Ո՛հ, գեղեցիկ հայկական կեանքը, պոհէմի կեանքը զոր հայերը ապրած են և զոր ուրիշ կերպով չեն կրնար ապրիլ: Կզկացեալ, ցրուած, փոքր զանգուածներով ու փոքր շարժումներով կեանք մը, որ, սակայն՝ լքուած մայր երկրին մէջ ստէպ դիւցազնութեան մեծ գործեր ըրած է, ինչպէս իր սփիւռին մէջ ծաղկածութեան մեծ շրջաններ ապրած:

Բոլոր այս հատորներուն վրայ, որ դրական այլ և ալ սեռերու կը պատկանին, թիչ շատ զանազան նրբերանգներով, առանձին առանձին պիտէ չխօսիմ: Կարելի պիտի չլլլայ անոնց վրայ բաւական երկայն ըսել, ամբողջը հասկնելու համար, և ոչ ալ բաւական կարճ՝ բան մը չհասկնցնելու համար: Երբ մարդ զանոնք կարդացած է, միշտ իսկ պիտի հասկնայ թէ ինչ կայ կարգաւոր:

Մենք ունինք չորս կենսագրութիւններ, — Յովսէփ Արզուրեան, Ստեփաննոս Նազարեան, Գրիգոր Արծրունի, Ս. Մհարր, մէկ գրական ըննադատութիւն Ռաւահայոց Գրականութեան, մէկ վէպ, Մէլիքի աղիկը, և պատմութեան տեսակ մը՝ Հայ տուրպորտեան՝ պատմութիւնը՝ որ տեսակ մը վէպ է միանգամայն և որ կը պարունակէ միանգամայն գրական ու կնկնադրական սեռեր:

Հայ տպագրութեան պատմութիւնը, — ինչ պիտի հասկնար մարդ սանկ վերնագրի մը տակ:

Ուրիշ ոչինչ, անշուշտ, բայց եթէ պատմութիւնը ուր նշանակուած ըլլային տաթիւները՝ երբ առաջին անգամ հայերէն

գիրքներ տպուեցան, մարդիկը՝ որ զանոնք տպագրեցին, քաղաքը՝ ուր լոյս տեսան, անունները գիրքերուն ու գործներուն, շատ շատ քանի մը տողով կենսագրական տեղեկութիւններ գրեցին հեղինակին ու տըպագրողին հանգամանքներուն վրայ, ցուցնելու համար դարէ դար զարգացումը, տըպագրական արուեստին, ծախսերուն ու սպառման: Գիրքերու ընդարձակ ցուցակ մը. ոչ աւելի, ոչ պակաս: Տեսակ մը վիճակագրութիւն ժողովրդեան ընթերցման ճաշակին, քանակութեան, որակութեան, և գրչներուն:

Բայց ոչ. Լէօ գործը բոլորովին ուրիշ կերպարանքի տակ կը ներկայանայ:

Լէօ գրիչը ձեռք առած միջոց մտածած պիտի ըլլայ նախ կազմել կատալոկ մը՝ կամ հատոր մը քիչ մ'աւելի ընդարձակ: Յետոյ մտածած պիտի ըլլայ անմիջապէս՝ ինչ պիտի հասկնայ այս խեղճ հայ ժողովուրդը «անմարս ու անճոռնի քննադատական, փխխտփայական, իմաստասիրական աշխատութիւններով, խորթ կենսագրութիւններով» աւելի ոչինչ՝ անշուշտ, չոր ու քաղցած կատալոկներով: Ու այն ատեն Լէօ, ծրագրած պիտի ըլլայ գիրքը զոր բոլոր ժողովուրդը ախորժով պիտի կարդար, այսինքն փոխանակ հայ տպագրութեան պատմութիւնը գրելու, գրել պատմութիւնը՝ զոր կը բովանդակեն հայերէն տպուած գիրքերը: Ու ինչ չեն պարունակեր սա մեր հին տպագրութիւնները՝ սկսեալ Հազար ու մէկ զիշերներու միջնադարեան նորավէպերէն մինչև Միսթար, մինչև պատրիարքութեանց ու կաթողիկոսութեանց կոիւնները, մինչև Ֆրանսայի, իտալիոյ, Հնդկաստանի ու Լեհաց և Հունգարիոյ գաղութները: Լէօ այս բոլոր նկարագրած է մանրամասն, բոլոր իր ծանօթութեանց գորութեամբը և տեղեկութիւններովը՝ զոր չունէին գուցէ նոյն իսկ գիրքը գրողները: Կոստանդնուպոլսոյ առման ոգեւորուած նկարագիր մը կայ Հայ տպագրութեան այս պատմութեան մէջ, հնաիստական պատուական տեղեկութիւններ Հնդկաստանի ծագման ու աշխարհ

հազարկան բաժանմանց, Միխիթարի ամբողջ պատմութիւնը, Պարսկաստանի պատմութիւնը, ֆրանսական յեղափոխութիւնը պատրաստողներուն վրայ ուսումնասիրութիւն մը, և քիչ մը ամէն պատմական անձինքներուն ու ղէպերուն վրայ: Մ'ըրչէ հաստատուած Հայոց մամուլը կամ ինչչէ ակնարկուած, ողբացած ու լացուած Հայոց գիրքերուն մէջ: Ու լէօ այս բոլորը կ'ընդլայնէ հրապարակախօսի շեշտերով ու նկարագիրներով որոնք երբէք իրեն անսովոր չեն: Կը դիմէ պատմութեան գիրքերու, հանրագիտակներու կամ կենսապատկաններու և ուրիշ ամէն տեսակ գիրքերու զորս ունի մտքին մէջ կամ ձեռքին տակ:

Իր գեղեցիկ հատորը արդէն կազմուած է: Ինչ կը շահի ինք այս ոճով կազմուած ու կազմակերպուած գիրքէ մը: Ո՛չ շատ բան. գերազանց ընթերցման գիրք մը՝ ժողովրդեան համար, զոհութիւն մը զուր փառնած չըլլալուն համար իր թարթափումները գիրքերուն մէջ, օգտակար բըած ըլլալուն համար իր շորք մը ծանօթութիւններն ու տեսութիւնները՝ զորս սփռած է արդէն ուրիշ հարկեր յօդուածներու մէջ: Ունեցե՛ր է նաև զուտ առևտրական շահադիտութիւնները Բալզաքին կամ Սլեքսանդր Դիմալային որ իրենց վէպը կ'երկրնցնէին վճարքին չափին համեմատ: Լէօ կ'երեկ թէ աշխատութիւններ արտադրելու իր արուեստին մէջ, ուրիշ մղիչ ունեցած չէ, բայց եթէ միակ անյադիծելի զգացում մը օգտակար բան մը ըրած ըլլալու հայ ժողովրդեան:

Նոյն զգացումը որոշած է միանգամայն իր կենսագրական աշխատութեանց ոճն ու արտայայտութիւնը: Հայը որ պիտի կարգադրէր, Յովսէփ Արղութեան, Ս. Մեհրոբ, կը ճանչնայ Մշակի հոլովոյթները, կոիւները, նոյն իսկ ընտանիքը Գրիգոր Արծրունիին որ այնքան կորով զրած է իր առաջին հրապարակագրին մէջ, գիտէ՛ր բաւական հիմնովին թէ ինչ դեր կ'ուղտած էր կատարելու Հիւսիսսփայլը ժամանա-

կին հայ իրականութեան մէջ կամ թէ ինչ խաւար անկիւնէ կը ծագէր Նազարեանց դեռ չհասած կազմելու փառաւոր անուն մը, նուիրական դարձած շարք մը աշխատութիւններով, կամ դիւրութիւնները ու նի՛ր ճանչնալու աշխատակիցներու այն աւելի կամ նուազ փայլուն ընտանիքը որ թերթի մը շուրջը կ'ապրին ու անոր հետ կ'ամբողջանան: Հաւանօքն նա դիւրութիւնները չունի այս բոլորը ճանչնալու և ձեռքի տակ ունենալու Հիւսիսսփայլի թիւերը կամ Մշակի նախկին թիւերէն: Աւելի զօրաւոր պատճառներով հայ ընթերցող ամբոխէն կը խուսափեն ժամանակի պարագաները Յովսէփ Արղութեանի և մանաւանդ Ս. Մեհրոբի, որոնք լրագրներու մէջ աւանդուած չեն, և շատ կամ քիչ հեռաւոր անցեալի մը ծովին մէջ ցանուած, ցրուած, ու ջրախառնուած են՝ որոնց վրայ կը ծփան քանի մը նշուլաւէտ դէմքեր՝ թէ և աղճատուած, ինչպէս ընկղմածներու կառափներ՝ զորս պէտք էր ամբողջացնել ու ոգևորել:

Լէօ այս բոլորը նկատու առած է և իր կենսագրական հատորներուն մէջ մարդ ունի ամբողջ շրջանի մը պատմութիւնը այնքան ընտանեբար խմբուած անձի մը շուրջը, և զոր Լէօ գիտէ՛ իր եթէ ոչ փայլուն, բայց դուրեկան ու արտոբեկ ոճովը պատկերացնել:

Զարտուղութիւն կը կազմէ միայն իր Ռուսահայոց Գրականօրհանը. հոս տարբեր արտայայտութիւն ու նկարագիր կայ: Իրեն շատ սովորական ընդլայնումները, ամենասակաւ են, գրեթէ ոչինչ: Արդէն Ռուսահայոց գրականութիւնը դարձ մ'աւելի կեանք չունի, և շատ ալ անձանթ չէ: Սկիզբի քանի մը դէմքերը նա արդէն շատ անգամ տուած է իր յօդուածներուն և ուրիշ երկերուն մէջ. վերջինները դեռ շատ ծանօթ են, կենդանի, որպէսզի օրինաւոր ըլլայ հին ոճով անոնց կենսագրութիւն մ'ընել: Կան որ թուրքիայի և Ռուսիայի Հայոց մէջ հաւասարադաս պարած ըլլալով, քիչ շատ բոլոր հայութեան ծանօթ են: Լէօ քի փութարէն՝ աւելի ընդարձակ կը խօսի իրենց

տաղանդին ու ստեղծագործական կարողութեան վրայ, Նկատի առած է միայն քանաստեղծութիւն, քառերայորորիւն, վիպորորիւն. գեղարուեստական գրականութիւնը իր իրական ու անձուկ մտքով ։ Ստեղծ վերլուծումներ ու բացատրութիւններ կու տայ հեղինակներու գործերուն որ շահեկան են ։ Իր ըննադատութիւնները միշտ անորոշ ու անարիւն չեն. աւելի շատ անջնջելի կը խորանեն արուեստի ու հասակացողութեան թերութիւնները ։ Վերաւորած անձնասիրութեան ու ծիծաղական բան մը կայ ուսանայ այն հեղինակներու վրայ որոնք այսպիսի խորաններով նշաւակուած պիտի շարունակեն արեւին տակ շրջիլ ։ Ու Լէօի այս գործը կատաղի յարձակումներ կրեց դեռ իր հրատարակութեան պահուն ։ «Այս գործին համար շատ թշնամիներ շահեցայ, անգի Էլսէր Լէօ, բայց այլապէս չէի կրնար լինել. ճշմարտութենէն չէի կրնար շեղիլ» ։ Եւ ըննադատութիւնները դեռ չեն դադրած ձրձուել այս գործը՝ մանաւանդ այն մասերուն մէջ ուր Էլսէր շատ դեռ ապրող յայտնի հեղինակներուն վրայ կը խօստի ։ Բայց այս ըննադատածները նուաճ զկծեալ պէտք էին ըլլալ, քանի որ կարգացած պէտք են ըլլալ ինչ հասկացողութիւններով որ Լէօ առաջնորդուած է իր ըննադատութիւններուն մէջ ։ Յառաջարանի մէջ կը գրէ ։

Քննադատութիւնը միշտ և ամէն տեղ անհատական, անհնկական ինաստորոքիւն ունի, (ընդգծումները մերն են) քանի որ քննադատը իր կարծիքներէի, իր անձնական տպաւորութիւններէի վրայ է գլխաւորապէս հիմնվում ։ Քանի քննադատներ, այլոքան կարծիքներ, ~ այսպէս կարելի է ասել ։ Եւ դա, իմ կարծիքով, հէնց այն յատկութիւնն է, որ կատարեալ անկախութիւն է ապահովում քննադատութեան համար, այն անկախութիւնը, առանց որի հնարաւոր չէ ոչ մի դատաստան մարդկանց մէջ ։

Քննադատութեան տարեգործիւնները լիքն են անձնական տրամադրութեան, հայեացքների տարբերութեան բազմազոյն երևոյթներով ։ Մի տեղ հիացմունք, միւս տեղ սառն դատողութիւն, մի տեղ դրական վերաբերմունք, մի տեղ՝ բացասական ։ Եւ այս երևոյթները միշակ ընդունակութիւնների վերաբերմամբ չեն միայն յանձնաւ գալիս, այլ նոյն իսկ համաշխարհային հռչակ վայելող անունների շուրջ ։ Այսպէս

հիացած է Գէօթէի վրայ, բայց մի Բեօրնէ տեղիք էր գտնում նրան յանդիմանելու ։ Պիտարեւ վը անպէտքութիւն էր համարում Ռուսաց ամենամեծ բանաստեղծ Պուշկինին ։ Մաքս Կօրդաուն ոչնչացնում է Էմիլ Զօլային, Գի տը ~ Մօպսանին, Դիւրգինէ չէ հաւանում Հէյնէին ։ Եւ ինչ ։ Այդ քննադատները, այնուամենայնիւ, ճանաչվում են յարգանքի արժանի մտածողներ ։ Որովհետեւ սեփական անկախ հայեացք, որը հասկացողութիւններից հիւսած յենակէտ ունենալը նոյնքան բնական է, որքան այն, որ ոչ ոք անսխալական չէ և իրաքանչիւր միտք ու հասկացք այնքան յարգելի է, որքան դիմանում է քննադատութեան վերլուծումներին ։

Իմ հայեացքները, իմ ըմբռնողութիւնը, համոզմունքներս, զրական դատարարութիւնս թելագրել են ինձ, ուղղութիւն են ցոյց տուել ։ Այս կողմից ես ինձ կատարելապէս ազատ եմ համարում ։ Շայեացքներից, դատարարութիւններից ոչ մի բարեիկող մարդ չէ կարող հրաժարվել ։ Ընդունում եմ պատասխանատուութիւն միայն վերաբերմունքի հարցում ։ Ես սասցի որ ամէն կերպ աշխատել եմ ուղարկութեամբ վերաբերվել իմ առջեւ դրած գրքերին ։ Ընթերցողին է մնում գտանել թէ որքան իրաւացի եմ ես, ասելով թէ անթերի եմ կատարել այդ պարտաւորութիւնը ։

Քննադատութիւնը, այսպէս հասկացուած, պէտք էր ոչ գոց վշտացնել ։ Ո՛չ ապագէն ամէն մարդ ունի օրուան ժամեր, տրամադրութիւններ, հոգւոյ վիճակ, ուր այս ինչ զգացումը աւելի աղէկ կը հասկցուի, աւելի դուր կու գայ, քան ուրիշ մը, ուր՝ այսպէս ըսելու համար, իրենը, գրուածքները իրենց սովորական արժէքէն դուրս կ'երեւնան, առաւել կամ նուազ, քան ուրիշ վայրկեաններու մէջ ։ Գրականութիւնն ալ կեանքէն տարբեր բան մը չէ ։ Մի՛ արդեօք քննադատութեան մը վշտացողները կատարելութիւնն ունին ամէն բանի հաւանելու ։ Անոնք երջանիկ պիտի ըլլան ։ Ես, օրինակ, Ռուսահայոց Գրականութիւնը ամբողջ չլիցայ կարգալ, և շատ մասեր թողուցի ։ Փառնի մը կտոր մանաւանդ վերջերը և Արտվեանի մասը ինծի շատ գեղեցիկ երեւցան ։

Լէօի միակ մեծ վէպը, Մեկիքի աղիկը, իր նախընթաց բոլոր գրուածքներէն կը զատուի անով որ հողին որ հոս կայ միւսանելուն մէջ կը պակսի ։ Իր հողւոյն ամենէն պարզ ու ազնիւ արտայայտութիւնն է, եւ թէ կարելի է այսպէս բացատրել՝ որ Լէօ

հոս դրած է։ Այս վէպին մէջ ալ դեռ շատ կայ Ղարաբաղի պատմութենէն, — մեղիքները, անկախութեան ծրագիրները, խորայն Որի, Եսայի կաթողիկոս, Գիփեր ու Գանձասարի վանք, որոնք իբր շրջա- նակն ու յատակը կը կազմեն վէպին։ Լէօ շատ կը սիրէ քիչ մը ամէն տեղ կրկնել այս նիւթերը՝ որ արդիւնք կ'երեւի առա- ջին կրած խոր տպաւորութեանց որ դեռ բո- լորովին չի շնչուիր ու իր երկինքէն չի փա- րատիր։ Իր մէջ Ռաֆֆի մը կայ զոր ան- կարելի է բաւական հեռացնել։ Բայց Մէ- լիքի աղջիկը վէպին մէջ կայ նաեւ Գա- յրանէն, զոր ոչ մէկ տեղ չենք գտներ։ Այս դէմքը ամբողջ իղէալ մըն է՝ Ըլլալու կերպի վարդապետութիւն մը, Հայակա- նութեան ոգի մը և իմաստը ամբողջ գրե- ցին։ Ո՛ր գտած է այս դէմքը, չեմ գիտեր։ Բայց զայն գծած է աւարտուն արուեստով մը և անթերի վայելչութեամբ մը։

Նախ Հայականութեան ոգւոյն իր իղէա- լին իզական ձեւեր տուած է. արուեստի մէջ այս կերպարանքի տակ է ընդհանրա- պէս որ մարմին կու տան գաղափարնե- բուն։ Յետոյ զայն դրած է՝ այսպէս ը- տուած բարձր դասակարգին մէջ, Մէլիքի աղջիկը, աղջիկը իշխանին։ Ժողովուրդը՝ թէև ստէպ նեղուած ու ճնշուած այս աշ- խարհիս զօրութիւններէն, միշտ կը սիրէ սակայն հրաշալի բաները անոնց մէջ տես- նել։

Տեսարանը ուր առաջին անգամ Մէլիքի աղջիկը բեմ կու գայ, դաշտային հանդէս մըն է վարդավառին օրը, ուր շատ աղ- ջիկներ ու նորհարսներ հաւաքուած են ծառի մը տակ իրենց մէջ հասկցուած խա- դի մը համար։ — Լաւ է. միայն թէ քիչ մ'աւելի բացատրութիւն պէտք էր այն ա- դերսներուն նկատմամբ զոր ունի այս գուարթ խումբը Մեղիքին աղջկան հետ։

Խաղն այս է որ ծառէն կախ ընկած որբանի մը վրայ՝ նորահաս աղջիկները կարգաւ կ'օրօրուին, մինչ ուրիշներ գաւա- զանով մը կը ծծեն որորոտողին ոտներն ու ծունկերը՝ որ իր նշանածի անունը յայտ-

նէ։ — Գաւառական և նորանշան բարք, բայց հիշո՛ք՝ քանի որ կայ։

Խաղը ոգեւորող, զուարճալի է, բայց զայն դեռ աւելի կ'ըլլայ երբ.

Հերթը հասաւ մի բարձրահասակ աղջկան։ Նա ինչպէս երևում էր այս տօնի թագուհին էր. ոչ ոք նրա պէս գեղեցիկ և հարուստ զգեստ չու- նէր։ Նրա կտորձիք վրայ փայլում էին երկու շարան սուկի դրամները, մինչդեռ միւսների կտորձքը զարդարում էին արծաթ դրամներ։

— Հիմա մենք կը սկսենք, ձայն տուին այս ու այն կողմից։

Ամէնք աւելի մօտ եկան ճօճանակին, աւելի խիտ խմբվեցան։ Ամէն մէկն էր ուզում վերցնել ծծենելու փայտը։ Տաքացած հոտիների պէս ամ- բողջ խումբը ուզում էր տանջել, ծծեն իր ըն- կերուհուն։

— Ինչպիսի չը կայ, ասում էր մէկը։

— Ինձ սուէք փայտը, կանչեց մի յաղթան- դամ աղջիկ. — ես ցոյց կը տամ թէ ինչպէս են մրմնշում մարդու ոտները։

— Իս քեզանից պակաս չեմ ուզում մի լաւ տանջել սրան, պատասխանեց նա, որ արդէն բռնել փայտը և կանգնել էր ճօճանակի մօտ։

Աղջիկը լուռ էր. նրա հրաշալի ժպիտը հա- մաձայնութիւն էր յայտնում։ Իս համարձիք բարձրացաւ չուանի վրա։ Մետաքսէ կարմիր թաշկինակը յետ սողաց, ընկաւ նրա գլխից, բաց անելով նրա սիրուն ճակատը, չքեղ սաթի պէս թուր մազերը։ Երկու անգամ յետ ու առաջ գնաց ճօճանակը. աղջիկը եռանդուն շանքեր էր գործ դնում. նրա դէմքի վրայ մի սիրուն գոյն իշաւ։ Լիքը թշնքը աւելի ևս կարմրեցին, կար- ծես աշխատում էին նսեմացնել թաշկինակի գոյ- նը։ Առաջին հարուածը իշաւ նրա ոտների վրա և անողոք հարցը արտասանվեց պարզ կերպով.

— Ո՞վ է...

Ամէնք լռեցին։ Աղջիկը իր փոքրիկ բերանի մի անկիւնով կծեց գլխի թաշկինակի մի ծալքը. նրա նուրբ շրթունքների միջից երեւացին ձիւնա- փայլ առաձիներ, ժպիտը դարձաւ մի սիրուն, մեղմ ծիծաղ, որ փոսիկներ կազմեց թշնքի վրա, քիչ իջեցրեց երկար ու սրածայր թերթունքները մի շուտեւ թուր անքիւրի վրա, որովք այդ կա- նոնաւոր կլորիկ դէմքին, հրաշքն էին. նա լուռ էր։

— Ո՞վ է, կրկնվեց նոյն հարցը։

Երրորդ, չորրորդ հարուած։ Բայց նա չէ թօ- սում պինդ կծում է թաշկինակի ծալքը, ուսե- րը վեր է քաշում հարուածների ցուր մոտակայ- լու համար։ Նա դուրսաթեք էր, ճկուն։ Չուանը կատաղի թերթներ էր գործում, կրկնապատ- կելով իր թուրը նրա ծնկների կծկումից։ Եր- կու շարան սուկիները հանդարտ չրթկում էին, բազմվելով նրա բարձր ու լայն կտորձին։ Բա- լակ քամին մի քանի փրշիկներ իւլեց նրա մա- զերից և սկսեց հեղձկ կերպով խաղալ նրանց հետ, զգլել այդ սիրուն գլուխը։

Նրա յամառութիւնը չափ չէր ճանաչում։ Բե-

բանի մի անկիւնով կծած մետաքսը կարծես կապել էր նրա լեզուն: Բողոք չէր լսվում, հարուստները ցնցում չէին յառաջացնում: Այդ աղջիկը սկսել էր զարմացնել նոյն իսկ իր ընկերուհիներին: — Խփողները այժմ երկուսն էին. փայտով զինվածի դիմացը կանգնել էր մի ուրիշ աղջիկ, որ գործում էր գոտուց հիւսած լախտով:

— Բաղդասար... յանկարծ բոլորովին անսպասելի կերպով, լավեց բարձրում աղջկայ բարակ ձայնը, որ մի ակնթարթում փոխվեց մի հնուրէն և սիրուն ծիծաղի, կարմրութիւնը աւելի եւ խոսացաւ, տարածվեց մինչև ականջների ծայրը, կարծես արեւնը հիմայ դուրս կը ցայտէր:

— Սուտ է, կանչեցին ներքեից:

— Սուտդ, բացականեց նոյն ծիծաղը:

Աղաքիսի անուն գոյութիւն չուէր: Նորից հարցեր, նորից մի շարք անուններ վերեւից: Դիծաղում էին ամէնքը. և անգուսպ ուրախութիւն նից ամէն մէկը ստանում էր աւելի խիստ պահանջող լինելու հուանդ: Իսկ նա, որ նազելով ճօճվում էր ք ծիծաղում, այդ բախտաւոր գեղեցիկ արարածը, որքան բաւականութիւն էր գտնում իր շքնագր յամառութեան մէջ...

Բանն այն տեղին հասաւ, որ այլ եւ չը մնաց մէկը, որ չըրկէր նրան և չհարցնէր: Եւ նա տեղի տուեց, յայտնեց թէ այժմ ասում է: Տիրեց լուրթիւնը. բայց լավեց մի տարօրինակ խօսք:

— Զուլեմ, ասաց նա:

Դիծաղ, իրարանցում, դժգոհութիւն...

— Սուտ է, սուտ է... Էրէկ նա եկաւ մեր գիւղը...

Աղապէս էին ասում ընկերուհիները: Այլ եւ թագնելու կարիք չկար: Նա երկու անգամ լուռ յետ ու առաջ թռաւ և ապա, աչքերը ուղղելով դէպ ի վեր, դէպի ընկազնու խիտ ճիւղերը, ցած ծայրով, այս անգամ առանց որ և է ծիծաղի, արտասանեց.

— Զալալ...

Ասիկայ Մեւլեդի աղջիկն էր, Գայիանէն. բոլոր վէպը գեղեցիկ է, այս խորխոր շնորհքը, այս վայելչութիւնը միշտ պիտի գտնենք իրեն մէջ և աւելի յայտնի գիծերով:

Թեոյ կը յաջորդէն տեսարաններ՝ որ մեծ արժէք չունին, և աւելի կամ նուազ յաջող նկարագրութիւններ վարանդայի գլխաւոր կեդրոնի մը, Աւետարանոցին, Մէլիքի տան, ընտանիքին, կահկարասիքին ու կացութեան որոնք ակնածելի հնուութիւն մ'ունին: Այսպէս մենք կ'իմանանք որ ութնետասներորդ դարու շուրջ առաջին

քառորդին վարանդայի իշխանը Մէլիք — Յուսէինը մեռած էր. տանն ու իշխանութեան մեծն էր իր կինը, Աննա-Խաթուն. թէ նա աղջիկ մ'ունէր անուն Գայիանէ, վէպին դիւցազնուհին, երկու ալ արու զաւակ, ոտքերէն հաշմ Յովսէփը, և քաջառողջ ու չար Շահնազարը:

Ասիկայ արդէն պատմութիւն է:

Վարագոյրը կը փոխուի, և բնմի վրայ մենք այլ ևս Գայիանէն չենք գտնիր:

Ժամանակին վրայ կը խօսուի: Ութնետասներորդ դար մին էր ուր շատ կը խօսուէր ու կը խորհուէր հայ անկախ իշխանութեան մը վրայ, մանաւանդ Ղարաբաղի մէջ: Բանակցութիւններ կ'ընէին. թուրքը կամ պարսիկը չէին տաներ: Մեծցող ու յառաջացող ռուսը իրենց յոյս կը չնչէր: Ամէն ձեւի տակ, կանոնաւոր զօրքով կամ հրոսակային խմբերով թուրքը ու մամլէտական տարրը զարնելու ու վանելու հետ էին: Թուրքերուն յարատեւ ու ճշմարիտ պատիժ էին մանաւանդ հրոսակային խումբերը, որոնք մեծ դեր մ'ունին վէպին մէջ իրենց Մանաս ըստած պետովը:

Բայց թուրքերն ալ չեն քնանար: Սիւլէյման Բէկը, Աւետարանոցի իշխանը և սարափը, սիրելացի ըրիտտոնեայ ծնողաց զաւակ, հնէչէրիւթիենէ իշխանութեան բարձրացած, ամենէն աւելի մոլեռանդ մահմէտականը՝ որ երբէք եկած ըլլայ Վարանդայի կողմերը:

Իր կատաղութիւնը կը թափէ մարդու մը վրայ, որ հանճարեղ ըլլալով հանդերձ, կալանաւորուելու դժբախտութիւնը կ'ունենայ: Տէր Սողոմոնն էր, յաւիտենական քահանան, որ կը պատրաստէր ու կը յաջողցնէր Մանասի բոլոր ծրագիրները:

Տէր Սողոմոնը թէև արդէն հաշմ ու ընկճուած՝ չիկրնար արգելուլ Սիւլէյմանի զայրոյթը որ զինք ցից չհանէ: Ինք օրինակ մը պիտի ըլլայ զամէնքը զպաշու ու նուաճելու համար: Դիւր բազմութիւնը որ ամէն տեղէ պիտի թափի, այս ահարկու տեսարանին հանդիսատես, պիտի դառնայ իր տեղերը սիրտը ջարխախած ու ա-

ւելի իմաստուն՝ հպատակելու Սիւլէյմանի հրամաններուն։ Ու Սիւլէյմանի հրամանները ոչընչացուցն էին մարդոց։

Բայց Սիւլէյմանի վարդապետները այնչափ չէին հարգում ջարջարեալ Տէր-Սողոմոնի կողմով, որքան իր տանջանքները անոր ղնդերային ուժը։

Փայտի ծայրին շամփրած մարդը մի սաստիկ ցնցում գործեց և դարձեալ խնց ընդհանուրի նշագրութիւնը։ Նա լարեց իր բոլոր ջղերը, զարհուրելի հաստադակմութեամբ ձգեց իր կըծկված իրանը, ուղղվեց և կուրծքը չուտ տուեց դէպի արևելք։ Դա մեռնողի ծայրայեղ յանդգնութիւնն էր, որ ահ տարածեց մինչև իսկ Սիւլէյման-բէկի շրջանում։ Ցանդգնութիւն, անծնորայնութիւն այդ զարհուրելի դրութեան մէջ անգամ... Այսպէս էն մեռնում հսկաները։ Թէև այդ չարժամարը նա կոտորեց իր փորոսիքը, բայց էլի ծայն չհանեց։ Կարծես բաւական էր որ այժմ նայում էր երկնակամարի պայծառ ծայրին։ Բզեց առաջ տանել իր աշխարհը, բայց տեսնելով որ նա պիտի կապվուած է, երեք անգամ գլուխ տուեց անհուն բարձրութեան։ Ամբողջ ժամայի այժմ բռնացաւ մի գերբնական ահ։ Ամէն մէկը դողաց, երբ օդի մէջ հաստատու անշփոթ ծայրեր տարածվեցան...

— Ազատի մեր երկիրը՝

Մահը և Կեանքը, Սէրը՝ այս ցցին ծայրը՝ անուր վարձանքն է աղջկան մը։ Մէլիքի աղջկան, Կանգնած ամբողջ պարսպին վրայ։ «Աղուիւր քիչ կորացրած, մըտախոհ, ամբողջովին հայեացք դարձած», նա կը դիտէ, կը լսէ Տէր Սողոմոնը, և... Զալալ արտին մէջ կ'աւուրի։ Եւ աւելի բարձր տեսիլ մը կը նկարուի իր առջև, ժողովուրդը, երկիրը։ Խեղճ ժողովուրդը որ ոչինչ կրնայ ընել։

Բայց իր ներկայութիւնը ամբողջին գլուխը՝ ուրիշ ազդեցութիւն յառաջ կը բերէ ամբողջին վրայ։ Սիւլէյման բէկ զինք կը տեսնէ, և այլ ևս երկրիս վրայ ուրիշ բան չտեսներ։ Կրակը արուած է։

Աղէկ կատարուած է Գայիանէի նկարագրի զարգացումը, ուր իբր բնածին կ'երեւի իր մէջ չանտեսել խեղճերն ու թըշուառները՝ զորս կը ներկայացնեն Նազ-

լուն ու փէրին, և աննշմարելի ուժով մը բարձրանալ իր շրջապատին վեր։ Անշա-հեկան չէն նաև և հակառակ գեղարուեստի այն դիրքերը ուր Գայիանէ ոգեւորուած նոր շունչով մը կը խօսի նոր լեզուով մը, զոր այնքան գէշ կը հասկնան իր մայրը, դայիակը՝ Մէհրին, և մանաւանդ կոյս մը՝ Հեղինէն, ղնդկաժ արբուսուհին տեսակ մը կուսանաց վանքի՝ որ երկրիս վրայ ուրիշ բան չտեսներ բայց եթէ Աստուծոյ տունը ուր կ'ապրին, և Մէլիքի տունը՝ ուրկէ իրենց ապրուստ կուգայ։ Թող միւս բոլորը զրոգի բաժին ըլլալ։

Բայց Գայիանէի վարմունքը Տէր Սողոմոնի սպանութեան օրը առհասարակ զայլափոխութիւն յառաջ կը բերէ ժողովրդեան մտքին մէջ։ Եթէ նէ ամբողջին գլուխը ելած էր զինք ցուցնելու համար չէ՞ր անշուշտ, և սիրցուելու բէկէն որ այրական բարեմասնութիւններէ զուրկ չէր բոլորովին։ Ահա համոզումը որ կը տարածուի ժողովրդեան մէջ և անտանելի կացութիւն մը կը կազմէ Մէլիքի տան համար։ Յուսէին Մէլիքի աղջիկ մը, արդէն նշանուած թաշնի պայազատին հետ, թուրքի մը ետեւէ վարարեր է...

Ահա ինչ որ կրնար ամէն մարդ քաւացնել...

Գայիանէ կատաղի մոլեգնութեան ճրգնածամբ կ'ունենայ, զոր կ'արհամարհէ իր շրջապատի անհասկացողութիւնը և զոր ամենէն աւելի կը շահագործէ այս նոյղ Հեղինէն իր անմիտ ու շահասէր ապաշխարադրանքներով։ Կացութիւնը անտանելի կը դառնայ՝ երբ գիշերային ու զաղտագողի այցելութիւններէ վերջ, Գայիանէ կ'արձկէ թաշնի պայազատը, Զալալ ցաւազին մերժումով։ Մթնոլորտը ճնշող կը դառնայ դղեակին մէջ, մինչ Գայիանէ զբաղած է մի ինչ որ գիրք օրինակելու և նկարագրողելու։ Մանրանկարներուն մէջ հազար ու մէկ անկարկութիւններ կ'ընէ իր միտքերուն։ Աւերակար կարելի չէր այս դրութեան մէջ կենալ։ Մէլիքներու տան պատիւը արատէ ազատ պահելու հա-

մար, մայրը, ուրիշներ և մանաւանդ քե-
տին, Մէլիք Աւան, երկու կրակի մէջ կը
բռնեն. ճիշդ են այն շշուկները որ ժողո-
վըրդեան մէջ տարածուած են և իր սիրտը
թուրքի՞ մը համար է:

Փայիանէ հաստատական պատասխան կու-
տայ: Ընդհանուր զարմանք ու զայրոյթ,
Այո, կը կրկնէ աշխիւր ծոցէն փոքրիկ
խէնջար մը դուրս քաշելով: Անհրաժեշտ
կը փայլի. ներկաները վարանման մէջ կ'իյ-
նան: Այո՛ խէնջար մըն էր.

Շինված լէզգիների երկրում և հարիւր տա-
րուց աւելի էր, ինչ մի կուի մէջ ընկել էր Մէ-
լիք - Յուսէֆի պապի ձեռքը: Նրա պատեանն
էլ ճարտար վարպետի գործ էր. չըկար մի կտոր
արծաթ, որ ցոյց չըտար թէ ինչ ճարպիկ ձեռք
և հարուստ երեւակայութիւն է ունեցել արհես-
տաւորը: Գեղեցիկ էր մանաւանդ խէնջարի կռ-
թը. կոլոր արծաթը, որի կենտրոնում սնկված
էր արծաթի մեծ մեխը, ներկայացնում էր ա-
հագին բերանը բաց արած մի վիշապ: Որքան
հեշտ էր հասկացվում վարպետի միտքը, որ դը-
րած է այս մանրամասնարի մէջ: Նրա ստում է,
որ աշխարհը մի հրէշաւոր վիշապ է, և ով չէ
ուզում ոչնչանալ այդ ահաբեի բերանում, պիտի
ձեռքից չըտայ խէնջարը:

Այո՛ եւ կը սիրեմ թուրքը կը կրկնէ
ոգեւորուած, Փայիանէ, և այն օր որ նա
համարձակի ինձ մօտենալ, այս խէնջա-
րը կը խրեմ անոր կուրծքը: Մենք այր
մը կրկնիներէ ոչինչ կը սպասենք, մենք ե-
րեքհարիւրէն աւելի ենք, համարեա երկ-
րին բոլոր աղջիկները որ այս ուխտը բ-
րեր ենք: Եթէ մենք սպաննել չգիտնանք,
գէթ քաշովիմամբ ու պատուով կրնանք
մեռնիլ:

Փայիանէ այս նոր լեզուն թէ և ընդ-
հանուր զուարթութիւն յառաջ կը բերէ,
իր բրախայական երեւակայութեան մը
բորբորում, այսուհանդերձ կը սրտապնդէ
պատերազմողները այնքան վճռականու-
թիւն գտնելով ամենէն խեղճ ու ինայուած
արարածներուն քով ալ. ու զօրութեան հո-
սանք մը կը տարածուի երկրին մէջ: Հրո-
սակային խումբերը քիչ մը գիւրենք այլ

ևս անօգուտ կը նկատեն քանի որ ամէն
մարդ կրնայ իր անձնապաշտպանութիւնը
ընել, և բոլոր երկիրը կ'ըլլայ իբր բա-
նակ մը:

Ընդհարումը պատրաստուած էր:

Անդին Սիւլէյման բէկը չիկրնար սառն
ու անտարբեր կենալ, իր թախանձանքնե-
րովն և ստիպումներով ամէն մարդ գիտէ
արդէն սարսափամբ թէ Մէլիքի աղջիկը
բէկին ամենէն մեծ ցանկութիւնն է: Սիւ-
լէյման զայն կ'ուզէ ու կը պաշտպանէ
հակառակ թաշէնի պայագատին, Ջալալի,
և հակառակ աւելի նենգաւոր թշնամիի մը
Քէօսա-Մուփտարի, որ իր Պոլսոյ վեհա-
պետներուն համար նոր յագեցումներ և
լաւ է փնտռելու:

Սիւլէյման բէկ աներես ու անկոչ հիւ-
րը կ'ըլլայ Մէլիքի տան, մինչ միւս եր-
կուրը ստիպուած են զաղտագողի գոր-
ծել:

Փայիանէ երեքն ալ գերած էր ու ե-
րեքն ալ կ'արհամարհէր: Գեղեցիկ է այս
հպարտութիւնն ու արհամարհանքը. հոռ-
մէական գիծ մը կայ մէջ: Եւ յօժարու-
թեամբ կը յիշեմ Ուիլիոյսի քանի մը տո-
ղբը Նիոբէի համար որ աստուածներուն
դէմ կը խրախիւսէ և զանոնք կ'անշքացնէ:

Եւ ահա զայր Նիոբէ ընդ ընկերացն երամ պաշտու,
Գեղաշուքի քիւրաքացի արկանիւնն սակեմամուկ.
Դէմք անոյշ՝ կէս վառ ցամաքմբ, շարժեալ զըլիտըն
նազելի,
Ջէնր ծածիցն ի ծալ ծաւալ աստի անտի վէտ վէտ զու-
լամբ:

Ու հուսկ՝ կը յայանուի թէ Փայիանէ
բէկը կ'ուզէ: Սիւլէյմանը փայփայելու
համար ասկէ աւելի շողորմիչ բան չկար:
Այլ ևս անտանելի հիւր մը չէ, այլ տան
տէրը, սիրտ մը շահած է թէն քիչ զգա-
յուն ըլլայ սրտի անձնանուիրութիւններու:
Սիւլէյման քիչ մ'աւելի մարդասէր կը
դառնայ, բարի կ'ըլլայ նոյն իսկ կեաւոր-
ներուն հետ: Եւ բարեկենդանի ամբողջ
շարաթն ու մանաւանդ վերջի օրը որուն
պիտի յաջորդէ ամուսնութիւնը, բոլորը
բոլորին համար կ'ըլլայ, և կերութեամբ,
երաժշտութիւն ու ուրախութիւնը բոլոր

Աւետարանոցն ու իր չորս կողմը կը յորդէ:

Ասիական ուրախութեան արտայայտու-
թիւններուն նկարագիրը, գրքին ամենէն
շահեկան կտորներէն են:

Ազատութիւն ունին այն օրը բէկէն բան
մը պահանջելու և Սիւլէյման նոյն իսկ կը
ստիպէ Աննա խաթունը որ ինչ կ'ուզէ
խնդրէ իրմէ ցուցնելու համար իր մեծ սէ-
րը Գայիանէի համար:

Աննա խաթուն, Գայիանէի խորհրդով,
կը խնդրէ որ բարեկենդանի վերջի իրի-
կունը գինուորները իրենց հրացանները
դղեակի ծառաներուն ու գիւղացիներուն
յանձնեն, որպէս զի գիշերը հրացանա-
ձգութիւն ընեն ի պատիւ հարսանեաց, ինչ-
պէս նախնեաց սովորութիւն է:

Բէկը թմրած ու ապուշ՝ գինիէն, երգէն,
հեշտութենէն, արքայական շեշտով մը՝ Ը-
յայ կ'ըսէ և պարկելու կ'երթայ գեղիու-
թեան խոր ըունի մը մէջ:

Ռազմայարդարութիւնը լաւ յաջողած
է. գիւղացիները կը քաշուին, Աւետարա-
նոցը կը լռէ, բայց ամէն մարդ արթուն
է ու կը կասկածի չսպասուած ազէտ մը
որ կը յաջորդէ մեծ ուրախութիւններուն:
Հրոսակային խմբերը իջած են լեռներէն,
արգէն գիւղին մէջն են, և տրուած պալ-
մանադրական նշանի մը վրայ ապաստաբու-
թիւնը կը պողովայ, գիւղը իրարանցման
մէջ կ'անցնի, հրացանի հարուածները դա-
դար չունին. թուրքերը կը կոտորեն:

Յարձակողները կը մօտենան բէկի պա-
լատին. ողբերգական վայրկեանն է: Ի՛նչ
են այս հրացանաձգութիւնները. — թուր-
քերը կոտորելու համար են և ոչ հարսնի-
քը տօնելու...

Թակարդուած ու կատաղի մահմէտա-
կանը, յանկարծակի եկած, իր ձեռքին
տակ ոչ մէկ զօրութիւն, ոչ մէկ հրաման
չունենալով, շփոթած՝ կիսամերկ տունէն
կը փախչի, առանց գիտնալու ուր երթա-
լու է:

Իր մարդիկներէն անոնք որ կոտորուած
չեն, ամենէն հեռու տեղերը փախեր են:
Ի՛նչ կրնային անոնք ընել առանց զէնքի
և անակնկալին դիմաց:

Գայիանէ կռուին ահագնեանդը լսելով
սիրտը դող կ'ելլէ: Պիտի փախչի՞ արեօք
բէկը՝ առանց որ ինք կռուին մէջ մասն
ունեցած ըլլայ: Զինուած իր խէնջարով
նա կռուի կեղերնը մեկնելու վրայ է, ող-
ջունելով ամայի հայրենի դղեկին յիշա-
տակները ուր ինք միայն մնացեր է, և
ահա.

Պատշգամի վրայ ինչ որ թրխկոց լսեց, խաչ-
թուածի պէս ցնցվելով, Գայիանէ մի քանի քայլ
յառաջ վազեց, բայց նոյն թափով յետ ու յետ
մղվեց: Շէմքում կանգնած էր մի սարսափելի
մարդ. բոնիկ, առանց վերնագգեստի, բաց գլը-
խով, թուխ ու յուզված, փայլեցնելով աչքերի
սպիտակոցը, գինուրական փողը ձեռքում:

Բէկը...

Դա շունչ էր առնում, չը հաստատվով իր աչ-
քերին:

Խորովվելով կատաղութիւնից, յոյսը դրած
Աւետարանոցի նեղ ու ոլորուն փողոցների վրա,
ամէն տեղից լսելով իրան որոնողների հայհո-
յանքները, նա փախչում էր, երբ յանկարծ մի
սքանչելի հանգստութիւն զգաց: Հասել էր մի
լուռ տեղ, ուր որոնող չը կայր: Կանգ առաւ,
գլուխը բարձրացրեց. մէլիքի տունն էր, դար-
ձեալ խոնարհ ու հանդարտ, քնած այդ սարսա-
փելի ժամին: Դէպի այն տեղ քայլեցին նրա ոտ-
ները: Փախչելի, այն էլ այդ թան մօտից...
Զգուշացնելով իր կողմից կարող էր թողնել այնպիսի
նշանածին ու անհետախալ իր գլուխը ազատելու
կամ գինուորներ որոնելու համար: Դա առաջ
վազեց: Դուները բաց էին, ներսում կատարեալ
մեռելութիւն...

Այլապէս անկիւն չէր ուզում նա այդ տանից:
Թող հարիւրաւոր սրբը բարձրանան նա իր մերկ
ձեռքերով կը բռնէր նրանց բերանը. թող աջ ու
ձախ հրացաններ գոռան, իր մօի մէջ նա կը
սեղմէր չիկացած զնդակները, կ'անցնէր կրակի
և արեան ծովերով, բայց կը հասնէր այն աղջ-
կան որը ուզում է իր կինը դառնալ: Եւ եթէ
բոլոր ճանապարհները փակվեն նրա նստելիք
և թէ կարելի չիլինի դուրս տանել դրախտի գե-
ղեցուհուն, գոնէ այն տեղ, կրակի և ծիւրի մէջ,
արհեստաթափա, մահամբձ, բռնել նրան, սեղ-
մել թեւի տակ. գոնէ ծծել վարդագոյն կաշին,
որ այնպէս այրել գիտէ. գոնէ մի հպակոյութիւն,
զգալ փափուկ մարմնի տաքութիւնը, հոտոտել,
խածնել... Այլա, առիւծի նման միջից կէտ ա-
նել նրան, որ ուրիշի ձեռքը չընկնէ, ու... մեռ-
նել նրա դիակի կողքին...

Դա ոտնաց այդ տենջանքից և ներս վազեց:
Ոչ ոք դուրս չեկաւ, շուն էլ չը կար բակում:
Եւ ահա... Միմօանց հանդէպ, մենակ, առանց
որ և է արգելքի... Եւ հրապ, միշտ հրապ...
Աղջիկը մոռացնել տուեց ամէն ինչ, փախստա-
կանը դիթված է: Կատարի էր նրա հարսնա-
ցուն, ո՞րքան կատաղի... Ախիւ էր այն օրը երբ
սպանվում էր քահանան: Մի վայրկեան և... և

գեղեցկուհին կատարելապէս կը խնդրեցնէ նրան իր շնորհքով:

— Մեծ մարգարէ, գոռաց նա, վայր գցեց փողը և, թիւերը տարածած, նետս վազեց...

Գայիանէն ձեռքը տարաւ դէպի ծոցը, մի աւելաց շարժում գործեց և փոքրիկ խնշնարը պսպաւ ինչ նրա աջ ձեռքում: Բէկի հիացմունքը զարհուրելի կատաղութեան փոխվեց: Աղէկ և սո՛ւր... Նա այդպիսի բան չէր ենթադրել, և կրճատացնելով ատամները գոռաց, Բայց հարուածը անսխալ էր, շնչառիկ. նա պարտաւորած էր վաղուց և իշաւ յարձակովորի կրծքին: Մի րոպէ պողովատն էր, որ բաժանում էր երկուսին. այդ տարածութիւնը արագ կարճանում էր: Բացվեց բէկի բերանը, խոպրտ, արեան մէջ խեղդվող գոռոցներով հայհոյանքներ ժայթքեց: Բարձրացան նրա թափերը, ընկան աղչկայ ուսերի վրա և սկսեցին սարսափելի ոյժով քաշել նրանց դէպի առաջ, դէպի ի այն կուրծքը, որի մէջ ցցված սուրը աւելի և աւելի խոր էր գնում: Նա ուզում էր պատել, կտոր կտոր անել այդ ուսը, որին այժմ էին փայլում իր ձեռքերը: Արդէն նրա կրակոտ շունչը հասնում էր Գայիանէի դէմքին, իսկ բացված բերանի երկու շարք սպիտակ աւտմանը պատրաստ էին ծուռտել նրա քնքոյշ միւրը: Գայիանէն պաշտպանվում էր: Վերջին անգամ տասնեութիւն տարիների ոյժը թափելով խնշնարի կրծքի վրա, նա իր մարմնի գիրաթեւ թուփերէն մի տեղ հաւաքեց և սկսեց յետ քաշվել այդ սարսափելի գրկից, ուսերի վրա ծանրացած շուփա թափերէ: Մրցութիւնը կատաղի էր, բայց կարճատև: Գայիանէին յաշողվեց երկու ձեռքով յետ մղել վիրաւոր զապանին, բայց ինքն էլ մնաց մեխված իր տեղը: Նրա գո՛ւր ծանր կերպով տատանվելով, գնաց մէջքի վրա, սակայն ընկնելիս բռնեց սպանողի փէշից...

Նա բաց չէր թողնում նրան, ճիգ էր թափում, որ քաշէ նրան, մտնեցնէ իր միակ զէնքին, առամներին: Բայց ի զուր: Գայիանէն կուսացաւ, կրծքից դուրս քաշեց խնշնարը: Լախ բացված վէրքից արիւնը հոսեց առուի նման: Բէկը մռնչում էր վիշապի նման, խուսացնում էր: Վերջին շունչին վրա էլ նա չէր մոռանում, որ իրեն սպանողը մի աղէկ է և, մէկը ևս չէր թողլ, անկեղծ արարածներից, որոնք հայրենիներով, հազարներով հեծում են ոսմանցիների գրկում: Նա սարսափելի շանքեր էր գործ դնում, բայց Գայիանէն աւելի և աւելի թուլանում էր: Նրա բերանից էլ արիւն գնաց, և սակայն, նա բաց չբռնողից իր բռնած փէշը, կարծես ուզում էր, որ իր նշանածը քարացած մնայ իր կողքում, նայէ, տեսնէ իր զարհուրելի աչքերը, իր արիւնն ու ատամները...

Եւ Գայիանէն չարամարհեց այդ վերջին ցանկութիւնը: Լուռ ու անշարժ, վառված իր թափած արեան ջերմութեամբ, գեղեցիկ սպանողը, որպէս մի գիշերային յաւերժհարս, նայում էր իր սարսափելի գո՛րին և նրա օրհասական ճիւղերին պատասխանում էր մի անհոգ հեգնուած թեամբ, որ մեղմ կերպով յետ էր տարել վարսդապոյն շրթունքները և սուր ճառագայթներին

պէս ցայտում էր հրաշալի աչքերից: Ճրագը լուսաւորում էր կենանքն ու մահը: Կենաքը գեղեցիկ էր իբրեւ շառագունած արշալոյս. նրա բռնած խնշնարի ծայրից դանդաղ կաթում էր արիւնը: Մարդկային վրէժը... Թաւաղող դիակ, սարսափելի խռոցներ, որ վերջին անգամ արձակում էին պատառոտած սրտի կտորները, արեան կոյտեր, կրակ և զաւարում, իսկ այդ բոլորի վրա մի հրեշտակ, գեղեցիկ, անգութ:

Վէպը հոս կ'աւարտի: Այս Գայիանէին մէջ կայ բան մը հրէական, հոմէական և ուսական. և մեծ ոգի մը հայական, որ դարաւոր վրէժ կը շնչէ:

Բնականաբար արագ պարբերութեանց մէջ տեղեկութիւններ կը տրուին վէպի միւս անձնաւորութեանց կատարածին: Բոլոր աւուրած դէմքերն ալ չար վախճան կ'ուռնեան, վատթարագոյնը կ'ըլլայ ֆէօսա—Մոխտարի դատաստանը՝ զոր կանայք կուսանաց վանքի ահագին ժայռի գլուխէն վար կը գլորեն, վին մէջ:

Իսկ Գայիանէ, ինչ կ'ըլլայ Գայիանէ:

Հոս Լէօ կը քնանայ: Կ'ուզէ որ Գայիանէ վանք երթայ, և ինչ բանի համար գիտէր, — Յեղափոխութիւնը տանելու համար վանքին մէջ:

Արիւկայ ծիծաղական է:

Իր գործով Գայիանէ պէտք է արդէն ամենուն պատկառելի եղած ըլլայ, նոյն իսկ այս վանքի ըսուած կուսանցներուն, որոնցմէ ոչ ոք այլ ևս պիտի կրնար իր ազդեցութենէն ազատ գտնուիլ:

Իրեն, Գայիանէի, ուրիշ աւելի պատշաճ բան չէր մնար ընել՝ քան թագուհիի մը պէս տիրել և թագաւորել իր դղեկին մէջ ուր ժողովուրդը զայն պիտի նկատէր իրեն իշխանը:

Բայց քնանալը բնաւ վնաս չիրերեր Լէօի, քանի որ իր վէպին մէջ զամէնքն ալ արթնցուցեր է:

Եւ իր բազմաթիւ, հատուրաւոր գրուած ներուստ մէջ փոյթ մը չիցուցներ միշտ աւելի գիտակցութիւն, աւելի կորով ու գիտութիւն տալու այս խեղճ հայ գիւղացիին

որ չգիտեր թէ մատը կտրած միջոց ինչ պէտք է ընել:

Ոչ ոք պիտի կարենայ ուրանալ թէ Պ. Լէօ իր աշխատելու տոկոշունքիւնը և արտադրելու բեղմնաւորութիւնը նուիրած է հայ ժողովուրդին և անոր ամենէն աւելի անտեսուած խաւին:

Եւ երբ այս հէգ Պ. Արփիար ինձ կը յանձնէր Լէօի գործերը ուշի ուշով կարողալով ամբողջին քննադատութիւնը գրել, հայ ժողովուրդեան վրայ էր թեքեալ որ կը մտածէր:

Հ. Ն. ԱՆԿՐԿԵԱՆ

Վ. Ե Ր Զ

ԿՈՏՈՐԱԾ ԴԱՆԵՑԻՈՑ

Ե Ի

ՄԱՀ ՍՈՒԵՆՈՍ ԶՕՐԱԳԼԽԻՆ

— 48 —

ԱՅՍ պահուս Գրիստոնէից բանակավայրն էր հասած Ասպետն այն՝ որուն հոն գալուստը ցոյց տրուեցաւ.

Եւ ըսաւ անոնց. Ո՛հ, շնորհք թող ընէ մէկն ինձ ձեզմէ, Ո՛վ զինուորք, զիս գերագոյն Սպարապետին տանելու:

Շատերն ընկեր եղան իրեն՝ Զօրագրիւին քով գնալու Պանդըխտին նորալուրները լրսելու անձկանօք:

Սա յարգանօք ծռելով՝ ազնիւ աջոյն համբոյր տալ ուզեց, Աջոյն այն՝ որ սարսափ էր բարեկանն բռնութեան.

Ո՛վ տէր իմ, վրայ բերաւ յետոյ, թող չափ համբաւիդ Ովկիանու և աստեղաց տարածութեամբ սահմանուի, Երանի՛ թէ լաւագոյն բարեաց բանբեր քեզ գայի.

Այս խօսքիս վրայ հառաչեց, և յետոյ շուտ մ'աւելցուց.

Սուենոս՝ Դանեաց թագաւորին միակ որդի հորամոյն, փառք և զօրավիգըն ծանրաբեռն հասակին, Անձկաւէտ փափաքանօք ուզեց անոնց մէջ դասուիլ՝ Որ խորհրդոցդ հետեւելով՝ Փրկկէին զինուոր գլորուեցան. Ոչ երկիւղ տաժանակիր վըշտաց և ոչ վտանգնեբու, Ոչ իղձ ժառանգութեան թագին, և ոչ ալ գորով ներունի ծնողին՝ կըրցան երբեք վեհանձն ոգւոյն մէջ Մեղկացնել վըսեմախոհ այսպիսի տենչ մ'հրաբորբոց:

Կու մըղէր զինքը բաղձանքն ուսանելու հոս քեզմէ, Ազնուական վարժիչդ, արուեստն արիսական տաժանմանց, Եւ մասամբ մ'ալ զայրոյթ կը զգար և ցաւ ամօթի Աննշան իւր համբաւէն. զի կը լրսէր Հոնալդի Հրոչակապանձ անունն և փառքը տարածուած ամէն կողմ Լիաբեղուն հասունութեամբ՝ դեռ դաւարի տիոց մէջ: Բայց ամէն պատճառներէ աւելի զինքը շարժեց Ոչ եռանդն երկրաւորիս՝ այլ երկնային պարծանաց: